

ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հարությունից մոտ 400 տարի հետո, քրիստոնեությունը դեռևս շարունակում էր տարածվել ողջ աշխարհում: Հայոց երկրում ևս ձգտում էին շատ ավելին իմանալ Մեծ Վարդապետի ուսուցումներից: Սակայն հայերենով գրված գրքեր չկային: Քրիստոնեության պետական կրոն հռչակումով է՛լ ավելի էր մեծացել հունարեն և ասորերեն լեզուներով գրականության կիրառությունը: Հատկապես Աստվածաշունչ Մատյանը և հոգևոր գրականությունը այդ լեզուներով էին:

Ս. Սահակ Պարթևը, 387 թ. դառնալով Կաթողիկոս, իր հիմնական նպատակն է դարձնում մայրենի լեզվով գիր ու գրականության ստեղծումը: Աստիճանաբար իր շուրջն է համախմբում նույն նպատակով տոգորված մտավորականներին, այդ թվում նաև Ս. Մաշտոցին: Ստեղծված թարգմանիչ-թարգմանիկ խումբն ի գործ էր լիովին բավարարել եկեղեցու իրական պահանջը, որ էր հայերենով կատարել եկեղեցական պաշտամունքներն ու Սուրբգրային ընթերցումները: Ս. Մեսրոպն այն միակն էր, ով լիովին էր ըմբռնում ժամանակի հրամայականը, այսինքն՝ ունենալ Հայ դպրոց և հայ դպրություն:

Արշակունի Վռամշապուհ արքան և Սահակ Պարթև Հայրապետը ցնծությամբ լսեցին երանաշնորհ վարդապետի որոշումը և աշակերեցին նրան: Դանիելյան գրերի օգտագործման անհաջող փորձի հաջորդեց Մաշտոցի մոտի մեծագույն երկունքը: Աստվածային տեսիլի ներշնչմամբ, 406 թ. նա իր Սուրբ աջով հայրաբար կերտեց հայոց լեզվի ամբողջական նշանագրերը: Իրեն նախափորձ-նմուշ, Մեսրոպն իր երկու աշակերտների՝ եկեղեցյաց գավառի Հովհաննի և Պաղնացի Հովսեփի օժանդակությամբ Աստվածաշնչից հայերենի թարգմանեց Սողոմոնի Առակաց գիրքը: Հայ ոսկեդենիկ լեզվի Աստվածաշնչական առաջին խոսքերը եղան. «Մանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, ընդունել զդարձուածս բանից, ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ, եւ ուղղել զիրաւունս...», ուր, զարմանալի զուգադիպությամբ թերևս, հանդիպում ենք Մեսրոպյան Այբուբենի 36 գրերին՝ ասե՛ն մասնավորաբար ընտրված, նորաստեղծ գրերը փորձելու հնարագիտությամբ: Այս սկսվեց Աստվածաշունչ Մատյանի ամբողջական թարգմանությունը, որ մշակումներով ու լրացումներով տևեց շուրջ 30 տարի: Գլխավոր թարգմանիչն ու ղեկավարը Ս. Սահակ Պարթևն էր: Սյուս թարգմանիչներն էին Ս. Մեսրոպ Մաշտոցը, Եզնիկ Կողբացին, Հովսեփ Պաղնացին, Կորյուն Սեանջելին, Ղևոնդ Վանանդեցին, Հովհան Եկեղեցացին: Եվ, ի վերջո, Աստվածաշունչը հայերենախոս էր. Աստված խոսում էր հայերեն: Անկրկնելի թարգմանության շնորհիվ, Տիեզերական Գրքի հայերեն օրինակն անվանվեց Թագունի թարգմանությանց: Այս ձեռնարկումը հիմնարկե՛ք էր ծավալվող հոգևոր-մշակութային նոր շարժման, որը փոքր-ինչ հետո պարզեկու էր մեզ մեր ՈՍԿԵԴԱՐԸ:

5-րդ դարում հունարենից և ասորերենից հայերենի թարգմանվեցին բազմաթիվ այլ երկեր, այդ թվում՝ Աթանաս Ալեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Սեբերիանոս Դարաղացու, Կյուրեղ Նրուսադեմացու. Եփրեմ

Խորի Ասորու, Հովհան Ոսկեբերանի, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուացու, Պրոկոփի, Դիոնիսիոս Թրակացու, Փիլոն Երրայեցու, Տիմոթեոս Կուզի, Պորփյուրի, Արիստոտելի, Պատմի գործերը: Այդ երկերի որոշ մասն այսօր պահպանվել է միայն հայերենով (հունարեն բնագրերը չեն պահպանվել):

Ս. Թարգմանիչների ծավալած ազգապահպան գործունեության արդյունքը եղավ նաև հայ գրականության սկզբնավորումը: Դարերի հարասունությանը հանձնվեցին Սահակ Պարբեի և Մեսրոպ Մաշտոցի շարականները, Կորյունի, Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու, Եզնիկ Կողբացու, Եղիշեի և այլոց պատմագրական, աստվածաբանական և փիլիսոփայական երկերը:

Թարգմանչական ու Ավետարանչական մեծածավալ շարժման կարևոր դրսևորումներից եղան նաև Սահակ-Մեսրոպյան վարժարանները, որոնք դարձան հայ գրականության ու մշակույթի հետագա զարգացման, ինչպես նաև հայ ժողովրդի ինքնության պահպանման վեմը: Հունիսի վերջին դամ հուլիսի սկզբին է նախ Օշականում տոնվում Սրբոց Թարգմանչաց Սահակ Պարբեի և Մեսրոպ Մաշտոցի հիշատակը, այս, հոկտեմբերին՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի ու նրա դաստիարակած Բարգմանչաց սերնդի (Հովսեփ, Հովհան, Ղևոնդ, Կորյուն, Եղիշե, Եզնիկ, Դավիթ Անհաղթ, Մովսես Խորենացի, Մամբրե Վերծանող, Արժան, Մուշե, Խոսրով, Ղազար Փարպեցի և դարերի հեռավորությունից իսկ Սահակ-Մեսրոպյան հոգևոր բուրայում բրձված Գրիգոր Նարեկացի, Ներսես Կյայեցի և ուրիշներ), որը տոնն է նաև հայ դպրության ու մշակույթի:

Հոգևոր լուսավորության ոսկեդարը մեր Եկեղեցին օժտեց ազգային նկարագրով և ինքնուրույնությամբ: Ուսուցումը Եկեղեցում ու վաթժարաններում, Թարգմանչությունը, ներին ու արտաին առաքելությունը եղան Ոսկեդարյան Եկեղեցու նկարագիրն ու արժանիքը: Այդ ժամանակի հայտնի Ս. Ավետարանն իր հայրը համարեց, իսկ մայրը՝ Եկեղեցին: «Հայտմեր՝ գտորը Ավետարանը գիտեմք, եւ մայր մեր՝ զառաքելական Եկեղեցի Կաթողիկէ», - ահա Ոսկեդարյան այն ոսկեղենիկ նշանաբանը, որ հարազատորեն որդեգրվեց հետագա բոլոր դարերում և նույնն է նաև ոչսոթ:

Հայ ժողովրդի պատմության տարրեր ժամանակահատվածներում Ս. Թարգմանիչներին են նվիրվել ներդրողներ, բանաստեղծություններ, հոգևոր ու ժողովրդական երգեր: Վարդան Արևելյան հորինել է «Որը զարդարեցին» շարականն իր կանոնով, ուր օրհնաբանվում է Թարգմանիչների ազգուններ գործը:

Սուրբ Թարգմանչաց տոնը հայ ժողովրդի հարգանքի տուրքն է հայ գրին, դպրությանն ու մշակույթին, դրանց երախտավորներին:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ